չուել իրրև գաւակի միակ տէրը, ինչպէս և ճանաչուել է. ուստի և վերջինս պատկանել է բացառապէս այն ցեղին կամ այն սերնդին, որին պատկանում էր նրա մայրը։ Այս տեսակ պայմաններում սերուած մարդկային խմբակցութիւնների մէջ ազգակցութիւնը տիրապետում էր լոկ մայրական գծով։ Սերունդն աճում էր ու զարգանում կանանց շնորհիւ, որոնք այսպիսով դառնում էին խմբական կեանքի մի տեսակ կենդրոն։

Բայց և այնպէս խմբական ամուսնութեան այդ յարաբերութիւններին դրուած էր որոշ սահմանափակում, որ՝ ինչպէս ցոյց են տալիս պատմական ու մանաւանդ ժամանակակից ազգագրական փաստերը, պահպանւում էր խստօրէն. դա այդպէս անուանած *այլացեղ* (էքսոգամի) ամուսնութեան սովորութիւնն էր։ Այդ սահմանափակումն արտայայտւում էր նորանով, որ մի սոցիալական խմբի անդամները, մի սերնդի պատկանող տարրերը՝ այր և կին, իրաւունք չունէին միմեանց հետ զուգաւորուելու, այլ մի խմբի կանայքը պէտք է զուգաւորուէին մի ուրիշ խմբի արանց հետ և ընդհակառակն։ Ուրեմն որոշ խմբի կամ սերնդի իւրաքանչիւր տղամարդը դառնում էր մի տեսակ ամուսին արտաքին, մի օտար խմբի ամեն մի կնոջ համար։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ ամուսնութիւնը գոյութիւն ունէր ոչ թէ առանձին անհատների, այլ ամբողջ որոշ խմբերի միջև։ Այս տեսակ խմբական ամուսնութեան վրայ էր կառուցանւում *այլացեղ* ընտանիքի հիմքը, առաջանում *մայրիշխանութիւնը*, ընտանեկան այն հիմնարկութիւնը, որն ընտանիքի զարգացման պատմութեան մէջ մեզ յայտնի ամենահին. աստիճանն է։ Ահա այդ *այլացեղ* ամուսնութեան սովորութեան շնորհիւ՝ կին առնել և զուգաւորուիլ օտար սերնդից հնարաւոր էր միայն առևանգմամբ, մանաւանդ եթէ 'ի նկատի առնէինք, որ հնումը զանազան սերունդներն ու ցեղերը մեծ մասամբ միմեանց հետ թշնամական յարաբերութեան մէջ էին գտնւում։

Ժամանակի ընթացքում մայրիշխանութիւնը ենթար-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան